ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դասվար

(առարկա)

ԹԵՄԱ _**Հեքիաթների դերն ու դաստիարակչական նշանակությունը կրտսեր դպրոցում**

Կազմեց՝ Ռուզաննա Սարգսյան Յուրիկի

(անուն, ազգանուն, հայրանուն)

Կարճևանի հիմնական դպրոց

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Լուսինե Բալայան

<<Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

1. Հեքիաթի դերը երեխայի կյանքում 6
2. Հեքիաթի դաստիարակչական նշանակությունը երեխայի զարգացման գործում 8
3. Դերային խաղը կրտսեր դպրոցականի ճանաչողական գործունեության միջոց.....13
4. Հայտորոշիչ թեստ 17
5. Դասի պլան 21
6. Եզրակացություն 22
7. Օգտագործված գրականություն 26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հեքիաթները անդունդներ են՝ խորը, անծայր, անվերջ, հարուստ ու շքեղ աշխարհ: Հեքիաթը ամենաբարձր ստեղծագործությունն է, նույնիսկ հանճարները հեքիաթներ չեն կարողանում ստեղծել, բայց հեքիաթների են ձգտում:[5]

Հովհաննես Թումանյան

Հեքիաթներ սիրում են բոլորը՝ թե մեծերը , թե փոքրերը: Հսկայական է հեքիաթի դերն ու նշանակությունը մարդու կյանքում: Հեքիաթները ստեղծվել են շատ վաղուց՝ ժողովրդի կողմից: Լինելով հայ ժողովրդական բանահյուսության ամենահին, ամենատարածված ու ամենահարուստ ժանրերից մեկը՝ հեքիաթը երբեք չի կորցնում իր արդիականությունը: Հեքիաթներ ուսումնասիրել և գրել են շատերը և իրենց կարծիքն են արտահայտել : Իսկ Ղ. Աղայանը հիացմունքով նշում է .<<Իմ պատկերացմամբ հեքիաթը շատ և շատ նման է մայրական կաթին. կաթը կորչում է, բայց նրա արդյունքը չի կորչում: Հեքիաթը մեր տաղանդի, մեր երևակայության կաթն է: Իմ նպատակն է հեքիաթի միջոցով հեքիաթային աշխարհ մտցնել փոքրիկին, որպեսզի նա մտնի դրական հերոսի դերի մեջ, լինի նրա պես բարի, քաջ, ազնիվ>>[1] : Այն որպես բանավոր զրույց փոխանցվել է սերնդից սերունդ և հասել մինչև մեր օրերը: Հեքիաթների ստեղծման պատճառ են դարձել մարդկանց երազանքները, իղձերը, դժվար ապրելակերպը, ձգտումը առավել բարվոք կյանքի: Բոլոր երկրներում մարդկանց երազանքները նման են եղել, բայց ամեն մի ժողովուրդ դրանք արտահայտել է յուրովի: Ժողովրդական այդ երազանքներից ու ակնկալիքներից էլ ծնունդ է առել հեքիաթների զարմանահրաշ աշխարհը, որն ապրում և գոյատևում է իր հատուկ օրենքներով:

Հայտնի է, որ ժողովրդական բանարվեստի ամենատարածված ժանրերից մեկը՝ հեքիաթը, մշտապես եղել է կրտսեր դպրոցականի դաստիարակության կարևոր խթանիչներից: Հեքիաթի նպատակային ուսումնասիրությունը հատկապես մայրենիի դասաժամերին նպաստում է դպրոցականի անհատականության, մտածողության զարգացմանն ու ձևավորմանը, օգնում նրան կյանքի շատ երևույթներ հասկանալու, ուսուցչի օժանդակությամբ նրա ենթաշերտերի մեջ ներթափանցելու, հերոսների գործողությունները և քայլերը վերլուծելու, գեղեցիկը, բարին, ազնիվը ճանաչելու և

գնահատելու, դրանց մասին դատողություններ անելու, պարզ վերլուծություններ[1] կատարելու: Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների մոտ շատ կարևոր դեր է կատարում հեքիաթը:Ուսումնասիրվելով և դաստիարակվելով հեքիաթով՝ կրտսեր դպրոցականը ընդունակ է ինքնակազմակերպման միջոցով ձգտել ինքնաճանաչման՝ մասնավորապես հեքիաթի դերային խաղերի ընդգրկմամբ աշակերտները դրսևորում են հարգանք, ազնվություն, պատասխանատվություն, ինչպես սեփական անձի, այնպես էլ այլոց հանդեպ՝ անկախ տարիքից, սեռից, ազգությունից, բարեկեցության աստիճանից, արտաքին տեսքից, ընդունակությունից, մասնագիտությունից, համոզմունքներից և այլ առանձնահատկություններից : Նրանք սոցիալական հարաբերություններում գործում են կառուցողական և համերաշխ, դրսևորում են ընկերակցելու ունակություն և համագործակցային կոնֆլիկտների խաղաղ կարգավորման հմտություններ: Ժամանակակից կրթական համակարգի նպատակներից մեկն է՝ երեխային տալ այնպիսի կրթություն, որը նրան հնարավորություն կտա ոչ միայն լսել, այլ ձեռք բերել ինքնուրույն մտածելու և գործելու կարողություններ և հմտություններ, անկաշկանդ արտահայտվելու հնարավորություն կընձեռնի և այդ հմտություններն ու կարողությունները կկիրառի գործնականում:

Հետազոտության արդիականությունը

Մայրենիի դասագրքերում բացառիկ տեղ ունի հեքիաթը, որը կրտսեր դպրոցականների սիրելի ժանրերից է և բոլոր ժամանակներում մեծ դեր է ունեցել աշակերտների արժեքային համակարգի ձևավորման գործում: Այսօր էլ հեքիաթի՝ նոր մեթոդներով համակողմանի յուրացումը մեծացնում է նրա դաստիարակչական, ուսուցողական, ճանաչողական նշանակությունը, խթանում կրտսեր դպրոցականի երևակայության զարգացումն ու ստեղծագործական կարողությունների ձևավորումը: Հեքիաթն այնպիսի ժանր է, որի մասին խոսել են երեկ, խոսում են հիմա և կխոսեն վաղը: Հեքիաթին անդրադարձել են Թումանյանը, Աղայանը, Ռոդարին, Պուշկինը, Կոլլոդին, Անդերսենը, Գրիմմ եղբայրները, Ուշինսկին, Սուխոմլինսկին, իսկ ժամանակակից մանկագիր Սուրեն Մուրադյանը գրում է. <<Հեքիաթը մանկական իսկական կատարյալ ստեղծագործության այն պատուհանն է, որից ճառագած լույսը

[1] Ղ.Աղայան

ջերմացնում է մանուկ ընթերցողին, ձևավորում նրա հոգին: Այդ լույսն է օգնում նրան տեսնելու, ընկալելու աշխարհի երևույթները, առարկաները, նրա առջև բացում կյանքում շիտակ ու ազնիվ քայլելու կանաչ ճանապարհ>>[6]:

Հետազոտության խնդիրներն են՝

- ուսումնասիրել թեմայի վերաբերյալ ուսումնամեթոդական գրականություն,
- մատնանշել հեքիաթների անմիջական ազդեցությունը աշակերտների երևակայության զարգացման և հեքիաթաստեղծման կարողության ձևավորման վրա,
- հիմնավորել կրտսեր դպրոցականների անհատականության ձևավորման գործում հեքիաթների բացառիկ նշանակությունը,
- կատարել հեքիաթաստեղծման կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքներ և ստուգել դրանց արդյունավետությունը նշված գործընթացում:

Հետազոտության օբյեկտը

Հետազոտության օբյեկտը մայրենիի դասագործընթացն է՝ դպրոցականների հեքիաթաստեղծման կարողությունների համատեքստում:

Հետազոտության առարկան

Հետազոտության առարկան դպրոցականների հեքիաթաստեղծման կարողությունների ձևավորման մեթոդական համալիրն է մայրենիի դասագրքերում զետեղված հեքիաթների միջոցով:

ԳԼՈՒԽ 1. ՀԵՔԻԱԹԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԿՅԱՆՔՈՒՄ

Հեքիաթն անբաժանելի է գեղեցիկից: Երեխան հեքիաթի շնորհիվ աշխարհը ճանաչում է ոչ միայն մտքով, այլ սրտով: Եվ ոչ միայն ճանաչում է , այլև արձագանքում է մեզ շրջապատող աշխարհի իրադարձություններին ու երևույթներին, արտահայտում է իր վերաբերմունքը բարու և չարի նկատմամբ: Հեքիաթից նրանք ստանում են առաջին տպավորությունները արդարության և անարդարության մասին: Գաղափարական դաստիարակության առաջին փուլը նույնպես հեքիաթի շնորհիվ է սկզբնավորվում: Երեխաները գաղափարն ըմբռնում են միայն այն դեպքում, երբ այդ գաղափարը մարմնավորված է պայծառ կերպարներում :

Վ. Ա. Սուխոմլինսկի

Հեքիաթը ժողովրդական բանահյուսության ամենահին, ամենատարածված և ամենահարուստ ժանրերից մեկն է: Նրա ստեղծողն ու պահպանողը միայն ժողովուրդն է: Հեքիաթը բանավոր, արձակ պատմվող հրաշապատում ստեղծագործություն է՝ հիմնված երևակայական հնարանքի վրա, հնարանք, որի բազմապիսի և ավանդական ձևերը չեն կրկնվում բանահյուսության որևէ այլ ժանրում:

Ժողովրդական հեքիաթները բարձրացնում են երեխայի ճանաչողականությունը, ձևավորում են հոգևոր և բարոյական հայացքները: Հեքիաթի դերը երեխաների զարգացման գործում բազմազան է՝ սկսած երևակայությունը զարգացնելուց մինչև ճիշտ խոսքի ձևավորում: Հեքիաթը երեխաներին կյանք սովորեցնելու, չարի ու բարու մասին պատմելու ամենամատչելի տարբերակն է: Երեխաները ավելի հեշտ են ընկալում հեքիաթը, քան մեծահասակների դաստիարակչական քարոզները:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն երեխաները, ում փոքր հասակից հեքիաթներ են պատմել, ավելի շուտ են սովորում իրենց մտքերը ճիշտ և սահուն արտահայտել: Կարևոր է նաև այն, որ հեքիաթները երեխայի խոսքը դարձնում են ավելի զգացմունքային և պատկերավոր:

Հեքիաթը հայրենիքի նկատմամբ սեր դաստիարակելու լիառատ և անփոխարինելի աղբյուր է: Հեքիաթի հայրենասիրական գաղափարը նրա բովանդակության խորքում է: Ժողովրդի ստեղծած հեքիաթային կերպարները, որոնք ապրում են հազարամյակներ, երեխայի մտքին ու սրտին են հասցնում աշխատավոր ժողովրդի հզոր ստեղծագործական ոգին, կյանքի նկատմամբ նրա հայացքները, իդեալները , ձգտումները[1]:

Վ. Սուխոմլինսկի

Լավ հեքիաթը կյանքի ծնունդ է՝ խաղ, արկած, հրաշք, ճակատագիր … հեքիաթի թեմաները անվերջ են: Երեխան ակամա այնտեղ գտնում է իր կյանքին համապատասխան իրավիճակներ, փորձում է իրեն նույնացնել համարձակ և քաջարի հերոսների հետ: Հեքիաթներում արտացոլված են ժողովրդի աշխարհզարգացման ու աշխարհայացքի բովանդակությունն ու բնույթը, դարավոր պայքարը կեղեքիչների դեմ, նրա ազատատենչ և ըմբոստ ոգին, խաղաղ ստեղծագործ աշխատանքի անկոտրում ձգտումը, ժողովուրդների բարեկամությունը, նրա վառ հայրենասիրությունը, լավատեսությունը և բոլոր այն լավագույնը, ինչ ձեռք է բերել նա իր պատմական զարգացման ճանապարհին: Հեքիաթների մեջ տեսնելով ժողովրդի հանճարի ուժը, նրա հզոր երևակայությունը՝ Ուշինսկին դրանք անվանում է <<ժողովրդական մանկավարժության փայլուն փորձեր, որի հետաքրքրական սյուժեն համակում է երեխայի էությունը, իսկ հաճախ կրկնվող բառերն ու դարձվածքները երեխային ոչ միայն լեզու են սովորեցնում, այլև նկարագրվող դեպքերն ու հերոսները չափազանց արագ կերպով տպավորվում են նրա հիշողության մեջ՝ իրենց բոլոր գեղեցիկ հատկություններով>>[4]:

Հեքիաթն ունի դաստիարակչական հզոր արժեք, բարոյական կարևոր սկզբունքներ, որոնք ոչ թե ներկայացվում են իբրև քարոզ, այլ արտահայտվում են հերոսների արարքների, խոսքերի միջոցով: Հենց այս հանգամանքն էլ ուժեղացնում է երեխայի հոգու, համոզմունքների ու զգացմունքների վրա հեքիաթի թողած ազդեցությունը: [2]Հեքիաթը միաժամանակ բանավոր կապակցված խոսքի զարգացման արդյունավետ միջոց է:

---

[8]1. Յու. Ա. Ամիրջանյան,
Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, «Մանկավարժ», 2005, էջ 9
2. Գ. Ե. Ղույումչյան, Մանկավարժություն, Գիրք II, Երևան, 2005, էջ 10
3. Տե՛ս Սերգեյ Արզումանյան, Էլդա Գրին, Իրավաբանական հոգեբանություն, Երևան, 2004, էջ 130

ԳԼՈՒԽ 2. ՀԵՔԻԱԹԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

<<Այն ամենը, ինչին նայում ես, կարող է հեքիաթ դառնալ և դու կարող ես պատմություն կերտել այն ամենից, ինչին դիպչում ես>>:

Հանս Քրիստիան Անդերսեն

Մանկավարժությունը սերունդների, դաստիարակության և զարգացման հիմնախնդիրներով զբաղվող գիտություն է: Այլ խոսքով՝ այն §գիտություն է, որը հետազոտում է սերունդների կրթության, դաստիարակության և զարգացման օրինաչափությունները|[1]: Իսկ ահա բուն դաստիարակությունը §լայն ընդգրկում ունեցող հասարակական երևույթ|[2]: Նրա էության բացահայտումը մարդաբանական և հասարակական երևույթներն ուսումնասիրող գիտությունների ընդհանուր խնդիրն է: Մանկավարժական և հոգեբանական բնութագրումներով դաստիարակությունը գործունեություն է՝ մարդու մեջ որոշակի դիրքորոշումներ ձևավորելու նպատակով[3]: Դաստիարակության հիմնական նպատակը նոր ծնված երեխայի անձի ձևավորումն ու նրա հետագա զարգացումն է: Դաստիարակությունից է կախված երեխայի ընկալումը շրջապատող իրականության հանդեպ, նրա հարաբերությունները իր և շրջապատող մարդկանց հետ: Բոլոր երեխաները սիրում են հեքիաթներ լսել և կարդալ:Հեքիաթի բովանդակության հետաքրքրաշարժությունը, դեպքերի զարգացման հաջորդականությունը, հերոսների բնավորության գծերի հստակությունը, պարզությունը, հաճախակի կրկնվող սկիզբն ու բազմաթիվ արտահայտությունները, հաճելի ավարտը,մատչելի գաղափարն ու ենթատեքստը հեշտացնում են նրա ընթերցումն ու դարձնում ցանկալի: Այդ է պատճառը, որ թե՛

---

4 Երեխայի մ Ուշինսկի <<Հեքիաթը երեխայի կյանքում>>

մեծերը և թե՛ փոքրերը միևնույն հեքիաթը կարդում են բազմիցս՝ամեն անգամ նրանում հայտնաբերելով նորը, ուսանելին, գրավիչն ու հետաքրքիրը[2]:

Հեքիաթն ունի դաստիարակչական հզոր արժեք, բարոյական արժեքավոր սկզբունքներ ,որոնք ոչ թե ներկայացվում են իբրև քարոզ, այլ արտահայտվում են հերոսների արարքներով, խոսքերով: Հեքիաթը միաժամանակ բանավոր խոսքի զարգացման արդյունավետ միջոց է:

Հեքիաթների ուսումնասիրությունն այնպես պետք է իրականացնել, որ իրականն ու երևակայականը հասնեն երեխայի ինքնագիտակցությանը: Հեքիաթների մեջ տեսնելով ժողովրդի հանճարի ուժը, նրա հզոր երևակայությունը՝ Ուշինսկին դրանք անվանում է<<մանկավարժության փայլուն փորձեր, որի հետաքրքրական սյուժեն համակում է երեխայի էությունը, իսկ հաճախ կրկնվող բառերն ու դարձվածքները երեխային ոչ միայն լեզու են սովորեցնում, այլև նկարագրվող դեպքերն ու հերոսները չափազանց արագ կերպով տպավորվում են նրա հիշողության մեջ՝ իրենց բոլոր գեղեցիկ հատկություններով>>: Հեքիաթը երեխաների համար գոյություն ունեցող միակ իրականությունն է: Հեքիաթն ունի աշխարհաճանաչողական նշանակություն: Երեխաների համար դժվար է ընկալել իրականությունը, ուստի այն նրանց մատուցվում է հեքիաթի միջոցով[2]**:**

Ռուսական էթնոմանկավարժության հիմնադիր Գ.Ն. Վոլկովը [4] վերլուծելով հեքիաթի դերը երեխայի անհատականության ձևավորման գործում, եզրակացնում է, որ <<հազարամյակների ընթացքում ժողովրդի կողմից կուտակված հոգևոր լիցքը կարող է շատ երկար ծառայել մարդկությանը: Ավելին, այն անընդհատ կավելանա ու էլ ավելի հզորանա: Սա մարդկության անմահությունն է: Սա կրթության հավերժությունն է, որը խորհրդանշում է մարդկության շարժման հավերժությունը դեպի իր հոգևոր և բարոյական առաջընթացը>>: Երեխայի համար հեքիաթների կարեւորության, նշանակության մասին կարելի է խոսել անվերջ: Միանշանակորեն համակարծիք ենք որոշ հետազոտողների վերջնական եզրակացություններին՝ հրաշապատում հեքիաթների դերը երեխաների զարգացման եւ առողջ հոգեկերտվածք ձեւավորելու համար անգնահատելի եւ անփոխարինելի են :Ի վերջո, «երեխան, որը մեծացել է հեքիաթներ ու լեգենդներ ունկնդրելով, նկատելիորեն ավելի առողջ է, խելացի, քաջ և կրեատիվ»:

Երեխաներին պիտի բացատրել, որ հեքիաթում մի խումբ հերոսներ գործում են ինչ-որ արարքներ՝ իրենց նպատակներին հասնելու մղումով: Իրար դեմ կանգնած են բարի և չար ուժեր: Հեքիաթն անպայման պիտի ավարտվի բարի ուժերի հաղթանակով, որը հեշտությամբ չի տրվում. գլխավոր հերոսներն անցնում են բազում դժվարին փորձությունների միջով, կատարում իրենց առջև դրված անիրականանալի պայմանները, հաղթահարում անհաղթահարելի արգելքներ, և ամենակարևորը, բարին մենակ չի գործում. նրան օգնում են հրաշագործ ուժերը: Այդպիսով՝ երեխան ըմբռնում է բարու և չարի գործոնը ոչ միայն հեքիաթում, այլև կյանքում, առօրյայում: Հեքիաթի վերջում բարու հաղթանակը կոգևորի նրան՝ կատարելու բարի գործեր և հասկանալու, որ հաղթանակը հեշտ չի տրվում: Այսինքն՝ հեքիաթը պիտի մեկնաբանվի և իմաստավորվի իր իսկ կյանքի օրինակով: Երեխայի համար պետք է հեքիաթը կարդալ այնպես, որ այն նրան հաճույք պատճառի, նա մտովի տեսնի այդ պատկերները, հետո նոր կարդալ հեքիաթն ու վերլուծել՝ օգտագործելով դիդակտիկ պարագաներ: Այս դեպքում օգնում են հստակ կառուցված խոսքը, պատմողի հեքիաթային ոճը, ձայնը, որը պետք է տարբերվի պատմվածքն ընթերցելու ձայնից: Լսելուց հետո երեխաներին պիտի հանձնարարել, որ իրենք վերարտադրեն հեքիաթի [3]բովանդակությունը: Հեքիաթը վերարտադրելիս պետք է հասնել նրան, որ երեխաները հարազատ մնան նրա լեզվին ու ոճին, հաճախ պատմեն հենց այն բարբառով, որով շարադրված է հեքիաթը, գործածեն հերոսների խոսքերը, ժողովրդի բառն ու բանը: Անշուշտ, այդ դեպքում պիտի բացատրվեն անծանոթ բառերը, կամ երեխաներն իրենք պետք է ասեն հեքիաթում գործածված բառերի և արտահայտությունների գրական համարժեքները: Երեխաներին անչափ դուր է գալիս հեքիաթը ստեղծագործելով, փոփոխելով պատմելը: Առավել ևս օգտակար է հեքիաթին շարունակություն հյուսելը, որը նպաստում է ոչ միայն խոսքի զարգացմանը, այլև երևակայության թռիչքին: Հեքիաթը պատմել սովորեցնելիս կարելի է գործածել նաև ուսուցչի կամ աշակերտների << կազմած >> նկարներով պլանը: Սա պատմելու կարողության ձևավորման առաջին փուլն է: Հեքիաթի բովանդակության վերարտադրումը կարելի է իրականացնել ինչպես շարունակելով, այնպես էլ ընտրովի, շարքերով, խմբերով, դերերով, մրցույթային և այլ

[1]4Գ. Ն .Վոլկով

եղանակներով: Երեխաների համար հանձնարարելի կարելի է համարել հեքիաթների ուսումնասիրման պատմողական և հորինողական ձևերը, որոնք հետքրքրություն կառաջացնեն հեքիաթների ուսումնասիրության մեջ: Ուսուցչի կողմից՝ պետք է հանձնարարվի լուռ ընթերցել, հետո պատմել գեղարվեստական պատմումի և արտահայտչական միջոցների լայն օգտագործմամբ: Այս դեպքում երեխաները ոչ միայն լավ են յուրացնում բովանդակությունը, այլև ընդօրինակում են ուսուցչի պատմելաձևը, խոսքի շեշտադրությունն ու ձայնի հնչերանգը: Երեխաների համար հանձնարարելի կարելի է համարել հեքիաթների ուսումնասիրման պատմողական և հորինողական ձևերը, որոնք հետքրքրություն կառաջացնեն հեքիաթների ուսումնասիրության մեջ: Ուսուցչի կողմից՝ պետք է հանձնարարվի լուռ ընթերցել, հետո պատմել գեղարվեստական պատմումի և արտահայտչական միջոցների լայն օգտագործմամբ: Այս դեպքում երեխաները ոչ միայն լավ են յուրացնում բովանդակությունը, այլև ընդօրինակում են ուսուցչի պատմելաձևը, խոսքի շեշտադրությունն ու ձայնի հնչերանգը: Հեքիաթի ուսումնասիրման հորինողական ձևը ստեղծագործական մեթոդ է և ավելի լայն կիրառություն ունի կրտսեր տարիքի երեխաների ուսուցման գործընթացում, երբ երեխային հնարավորություն է տրվում յուրովի վերարտադրելու հեքիաթի բովանդակությունը, փոփոխություններ մտցնելու դեպքերի զարգացման մեջ՝ հավատարիմ մնալով հեքիաթի ընդհանուր ոգուն: Միշտ չէ, որ պետք է պատրաստի հեքիաթներ տանք երեխաներին, որպեսզի նրանք վերարտադրեն այն պասիվ կերպով. Երբեմն կարելի է հանձնարարել նույն թեմայով հեքիաթներ հորինել, որը զարգացնում է երևակայությունը և մղում ստեղծագործելու: Երեխաների մտահորիզոնն ու երևակայությունը զարգացնելու համար կարևոր են նաև հեքիաթների բեմականացումները: Բեմականացումից առաջ պետք է կատարել բովանդակության և գաղափարի վերլուծություն, հերոսների բնավորությունների առանձնահատկությունների քննարկում , ընտրովի և դերերով ընթերցանություն: Այս ամենից հետո նոր կարելի է անցնել բեմականացմանը: Բեմականացումների ժամանակ երեխան սովորում է ոչ միայն խոսք կառուցել, այլև նոր բարոյական հատկանիշներ է ձեռք բերում, ճիշտ պատկերացումներ ունենում տարբեր երևույթների, առարկաների, մարդկանց, բույսերի ու կենդանիների մասին:

Հեքիաթի ուսումնասիրում կարելի է անցկացնել նաև խաղային ձևերով: Օրինակ՝

Հեքիաթի բեմականացում

ա/ Ընտրել այնպիսի հեքիաթ, որի բեմականցմանը մասնակցի որքան հնարավոր է շատ երեխա,

բ/ Կատարել դերերի ճիշտ բաշխում,

գ/ Որևէ մեկին դեր չհասնելու դեպքում նրան ներառել հագուստի կամ դեկորների ձևավորման գործընթացում:

Հեքիաթաբուժության այս ձևը կնպաստի թիմային աշխատանքի արդյունավետության , երեխաների միջանձնային հարաբերությունների ձևավորում: Հեքիաթի հորինում Կարելի է երեխաներին հանձնարարել անավարտ հեքիաթներ և առաջարկել դրանք շարունակել և ավարտին հասցնել: Կամ ՝ ուսուցիչն առաջարկում է հեքիաթի սկիզբը, իսկ աշակերտներից յուրաքանչյուրը հեքիաթի շուրջ հորինում է մի քանի նախադասություն: Կարելի է նաև հորինել նոր հեքիաթ՝ հիմք ընդունելով հեքիաթի հենակետային բառերը: Միայն ճիշտ ընտրված և ճիշտ ուսումնասուրված հեքիաթների միջոցով է հնարավոր երեխաներին փոխանցել այն ամենը, ինչը պետք է նրանց ինքնահաստատման և զարգացման համար, օգնել ինքնավստահություն ձեռք բերել, հաղթահարել բարդությունները, դիմագրավել կյանքի դժվարությունները և վերջապես դրական հատկություններ ձևավորել, որն էլ նրանց առաջին քայլն է դեպի կյանք: 5 Կարելի է նաև հեքիաթը ձայնագրել տարբեր ձայներով: Տեքստի շուրջ աշակերտների ակտիվ ու ինքնուրույն աշխատանքը կազմակերպելու տեսանկյունից շատ արդյունավետ է նաև հեքիաթի որևէ դրվագի վերարտադրում նկարի միջոցով, երբ երեխաները մտովի վերապրում են հեքիաթի բովանդակությունը: Հեքիաթի ուսուցման հիմնական խնդիրներն են՝ հեքիաթի դերի ու նշանակության ճանաչում, սովորողների բարոյական որակների ձևավորում, հեքիաթի գեղարվեստական առանձնահատկությունների ընկալում: Ուսուցման գործընթացի ուղղվածությունը՝ մտագրոհ, հեքիաթ բառով, հեքիաթի լուռ և բարձրաձայն ընթերցում, բնագրային աշխատանք՝ բառերի բացատրություն , ամփոփ հատվածների առանձնացում և վերնագրում, բովանդակության վերարտադրում, կերպարների բնութագրում, եզրահանգում: Հեքիաթը երեխայից պահանջում է յուրահատուկ որակներ՝ բառերի պատկերային զգացողություն, ստեղծագործական մտածողություն, հերոսների վարքի դրդապատճառների ընկալում, ապրումակցում և այլն: Այս բնութագրիչներն

ընդհանուր առմամբ ենթադրում են հատուկ գեղագիտական ընկալում, որը ձևավորվում է հատկապես հեքիաթի ուսուցման միջոցով: Հետևաբար հեքիաթների վերլուծության ժամանակ ուսուցչի խնդիրն է՝ օգնել սովորողին հասկանալու հեքիաթի հատկանիշները: Օրինակ, հեքիաթի ընթերցման ժամանակ ուսուցիչն առաջադրում է գծել հեքիաթի հերոսի ճամփորդության երթուղին կամ էլ առաջադրվում է նույն հեքիաթը պատմել տարբեր սովորողների կողմից: Շատ կարևոր է նաև սովորեցնել երեխային պատմել հեքիաթի դիպաշարը: Նպատակահարմար է, օրինակ , որ հեքիաթի բեմականացման ժամանակ երեխան ինքն ընտրի այն հերոսին, ում դերը պետք է ստանձնի: Այսպես մեծանում է ապրումակցումը9: Գեղագիտական դաստիարակության իմաստով հեքիաթի արդյունավետ ուսուցման համար մեծ նշանակություն ունի հեքիաթի պատկերազարդումների դիտումը: Այն օգնում է երեխային հասկանալ և հիշել կարդացածը: Հեքիաթների շատ պատկերազարդումներ հնարավորություն են տալիս պատկերացնել այնպիսի երևույթներ ու առարկաներ, որոնք երեխան չի կարող տեսնել անմիջականորեն: Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս առավել լավ ներկայացնել հեքիաթը: Հնարավոր է ոչ միայն հեքիաթի գրքեր ստեղծել մատիտի, ջրաներկի, թղթի օգնությամբ, այլև այդպիսի գրքեր կարելի է ստեղծել այլև յդպիսի հեքիաթներ կարելի է ստեղծել ինֆորմատիկայի ուսուցչի օգնությամբ համակարգչի միջոցով:

ԳԼՈՒԽ 3. ԴԵՐԱՅԻՆ ԽԱՂԵՐԸ ՈՐՊԵՍ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

Հեքիաթն անբաժան է գեղեցկությունից, նպաստում է գեղագիտական զգացմունքների զարգացմանը, առանց որոնց անիմաստ են հոգու ազնվությունն ու զգայունությունը մարդու դժբախտության, վշտի, տառապանքի նկատմամբ: Գեղեցկությունը բարոյական մաքրության, հոգնոր հարստության, ֆիզիկական կատարելության հզոր աղբյուր է: Գեղեցկության հետ երեխայի առաջին հանդիպումը տեղի է ունենում հեքիաթի միջոցով: Որպեսզի երեխայի մեջ ձևավորվեն գեղագիտական արժեքներ, նա պետք է ծանոթ լինի բնությանը, ճանաչի այն: Իսկ կրտսեր դպրոցական տարիքում բնության հետ երեխան ծանոթանում է հեքիաթի միջոցով: Կապույտ երկնքի խորությանը, աստղերի առկայծմանը, արշալույսի ն

վերջալույսի վարդագույն ցոլքին, հողմաշունչ եղանակից առաջ բոսոր մայրամուտին, երկնային լազուրում կռունկների երամին և շատ այլ գեղեցկությունների երեխան հանդիպում է հենց հեքիաթի մեջ, և նրա սրտում ծաղկում է գեղեցկությունը: Երեխայի համար հեքիաթների կարեւորության, նշանակության մասին կարելի է խոսել անվերջ: Միանշանակորեն համակարծիք ենք որոշ հետազոտողների վերջնական եզրակացություններին՝ հրաշապատում հեքիաթների դերը երեխաների զարգացման եւ առողջ հոգեկերտվածք ձեւավորելու համար անգնահատելի եւ անփոխարինելի են5: Ի վերջո, «երեխան, որը մեծացել է հեքիաթներ ու լեգենդներ ունկնդրելով, նկատելիորեն ավելի առողջ է, խելացի, քաջ և կրեատիվ»6:Կենդանի միտքը կապված են միմյանց հետ, ինչպես արևը և ծաղիկները,եթե արևը ծաղիկներին ջերմություն և լույս է տալիս, որի շնորհիվ նրանք ծաղկում են, ապա երեխայի սրտում ծաղկած գեղեցկությունն էլ զարգացնում է նրա միտքը, ավելի է սրում ընկալումը, արթնացնում է ստեղծագործական միտքը, խոսքը հագեցնում անհատական ապրումներով:Գեղեցկությունն է այն հզոր ազդակը, որի շնորհիվ կատարելության հասավ մարդը: Կրտսեր դպրոցական տարիքը ամենակարևոր շրջանն է անձի կայացման և զարգացման համար, այն կախված է երեխային շրջապատող ֆիզիկական և սոցիալական միջավայրից. դրանք են ընտանիք, դպրոց, ընկերներ: Կրտսեր դպրոցում պետք է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ կզարգանան սովորողների դեռևս նոր ձեռք բերած անձնային հատկանիշները՝ ինքնուրույնություն, ինչ-որ նոր բան սովորելու հակում, հետաքրքրասիրություն: Որն է լ պիտի հիմք հանդիսանա երեխայի «ես»-ի հետագա ամրաց-

մանն ու կայունացմանը: Այս տարիքից պետք է ակտիվորեն զարգացնել երեխայի համարձակ ստեղծականությունն ու երևակայությունը, ուշադրությունն ու մտածողությունը: Այս տարիքում երեխաները հիմնականում ընկալում են զգայարանների միջոցով, ուստի կարելի կազմակերպել այնպիսի խաղեր, որոնք կլինեն տեսողական, զգայական, դիդակտիկ: Երեխայի խաղի մեջ խոր ստեղծագործական բովանդակություն կա:

Խաղի մանկավարժական նշանակությունը ընդգծել և հետաքրքիր ու օգտակար մտքեր են արտահայտել Յա. Ա. Կոմենսկին,Ժ. Ժ.Ռուսոն, Կ. Ուշինսկին,Ա. Մակարենկոն, Յա.

[4]Կորչակը և շատ ուրիշներ: Խաղի դաստիարակչական նշանակության ուսումնասիրությամբ զբաղվել են նաև հոգեբաններ, սոցիոլոգներ, փիլիսոփաներ, ազգագրագետներ, արվեստագետներ, որոնք հիանալի գիտեն երեխայի ներաշխարհը: Մեծ մանկավարժ Սուխոմլինսկին ասել է տարրական դպրոցի մասին. « **Տարրական դպրոցը պետք է տա գիտելիքների կայուն շրջանակ, և ոչ միայն տարրական թվը, այլ նաև մյուս օղակները: Ուսուցումը պետք է կապված լինի մտավոր ֆիզիկական, աշխատանքային,գեղագիտական, բարոյական ուժերի, այսինքն բազմակողմանի խաղի հետ, լինի հուզիչ, հետաքրքիր և դառնա մի գիրք, որը երեխան ցանկանա կարդալ: Արդեն սովորելը նրանց համար դառնում է հետաքրքիր, գրավիչ, ուր կա խաղի «պայծառ լույսը**» : Խաղը երեխայի մտածողության ազնիվ զգացմունքների ու ձգտումների կենսատու աղբյուրն է : Խաղի միջոցով հատկապես երեխաները ստանձնում են հասարակական դերեր և յուրացնում վարքի կանոններ: Խաղը սովորեցնում է, փոխում, դաստիարակում և ինչպես նշում է Վիգոտսկին՝ « իր հետևից տանում է անհատի զարգացումը» : Դերային խաղի կարևոր գործառույթներից մեկն էլ խնդրահարույց իրադրության լուծումն է: Դա նպաստում է ասելիքի պատճառաբանվածության ապահովմանը: Խթանում է սովորողների հաղորդակցական ակտիվությունը, քննադատական և վերլուծական մտածողությունը, փաստարկելու խոսակցին համոզելու կարողությունները:[8]

Հեքիաթի ուսումնասիրում կարելի է անցկացնել նաև դերային խաղի ձևերով: Օրինակ՝

Հեքիաթի բեմականացում `

ա/ Ընտրել այնպիսի հեքիաթ, որի բեմականցմանը մասնակցի որքան հնարավոր է շատ երեխա,

բ/ Կատարել դերերի ճիշտ բաշխում,

գ/ Որևէ մեկին դեր չհասնելու դեպքում նրան ներառել հագուստի կամ դեկորների ձևավորման գործընթացում:

Հեքիաթաբուժության այս ձևը կնպաստի թիմային աշխատանքի արդյունավետության , երեխաների միջանձնային հարաբերությունների ձևավորում:

---

[4] Տե՛ս Ջ. Ռոդարի, Ստեղծագործական երևակայության քերականություն, Երևան, 1995, էջ 154 5. http://www.hayary.org/wph/?p=4419

Հեքիաթի հորինում

Կարելի է երեխաներին հանձնարարել անավարտ հեքիաթներ և առաջարկել դրանք շարունակել և ավարտին հասցնել: Կամ ՝ ուսուցիչն առաջարկում է հեքիաթի սկիզբը, իսկ աշակերտներից յուրաքանչյուրը հեքիաթի շուրջ հորինում է մի քանի նախադասություն: Կարելի է նաև հորինել նոր հեքիաթ՝ հիմք ընդունելով հեքիաթի հենակետային բառերը: Միայն ճիշտ ընտրված և ճիշտ ուսումնասիրված հեքիաթների միջոցով է հնարավոր երեխաներին փոխանցել այն ամենը, ինչը պետք է նրանց ինքնահաստատման և զարգացման համար, օգնել ինքնավստահություն ձեռք բերել, հաղթահարել բարդությունները, դիմագրավել կյանքի դժվարությունները և վերջապես դրական հատկություններ ձևավորել, որն էլ նրանց առաջին քայլն է դեպի կյանք:

Կարելի է նաև հեքիաթը ձայնագրել տարբեր ձայներով: Տեքստի շուրջ աշակերտների ակտիվ ու ինքնուրույն աշխատանքը կազմակերպելու տեսանկյունից շատ արդյունավետ է նաև հեքիաթի որևէ դրվագի վերարտադրում:Դերային խաղի նպատակներն են՝

- ✓ Զարգացնել սովորողի իմացականգործընթացները (մտածողություն, երևակայություն, ուշադրություն, ….) և հուզակամային ոլորտը (հույզեր, զգացմունքներ, ...), ստեղծարարությունը:
- ✓ Զարգացնել սովորողի հնարամտությունը, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու կարողությունը, աշխատասիրությունը և հետևողականությունը:
- ✓ Ձևավորել իր և ընկերների գործունեությունը գնահատելու կարողությունը:
- ✓ Զարգացնել անհատապես և խմբով աշխատելու կարողությունը, միմյանց հարգելու, փոխօգնություն ցուցաբերելու պատրաստակամություն:

Հաշվի առնելով այս բոլոր նկատառումները՝ որոշեցի ինքս հետազոտություն կատարել և ստեղծագործական որոնումների արդյունքում ստանալ դաս-ներկայացում , որտեղ երեխաները համագործակցային խմբերի բաժանվելով և

նախապես ստանալով առաջադրանքները ստեղծագործական մոտեցմամբ և ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառմամբ ներկայացրին բոլորիս քաջ հայտնի հեքիաթը՝ ապահովելով հետազոտելու և վերլուծելու կարողությունների, հմտությունների և ինքնաճանաչողության գործընթացը:

ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԹԵՍՏ

ՀԵՔԻԱԹԸ ԸՆԿԱԼԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Հայտորոշիչ թեստի արդյունքների վերլուծություն

Բարձր	Գնահատվում են այն դեպքում,երբ կարողանում են ոչ միայն պատասխանել թեստի բոլոր հարցերին,այլև մեկնաբանում և հիմնավորում են իրենց պատասխանները:

Միջին	Գնահատվում են այն դեպքում, երբ պատասխանում են թեստի բոլոր հարցերին,սակայն չեն կարողանում հիմնավորել այն:
Ցածր	Գնահատվում են այն դեպքում, երբ չեն կարողանում անգամ առանց հիմնավորման պատասխանել թեստի առնվազն 3 հարցի:

Սովորողների հեքիաթ ընկալելու կարողությունը ստուգելու նպատակով կազմեցի հայտորոշիչ թեստ ,ինչը հնարավորություն տվեց պարզելու, թե նախքան նպատակաուղղված աշխատանքները որքանով էր զարգացած աշակերտների հեքիաթ ընկալելու կարողությունը:

Աշխատանքն ավարտելուց հետո արձանագրեցինք հետևյալ արդյունքները -



Հայտորոշիչ թեստը կատարել ենք երրորդ – չորրորդ դասարաններում՝ 12 աշակերտի շրջանում: Ստորև ներկայացնում ենք հայտորոշիչ թեստի արդյունքները:

ԹԵՍՏ 1 .

՝Հիշու՞մ եք՝ով է առաջին անգամ ձեզ հեքիաթ պատմել ։Հարցին աշակերտների 8%-ը պատասխանել է (1 աշակերտ),որ հայրիկն է պատմել, 59%–ը (7աշակերտ)՝ մայրիկը, 25%–ը(3աշակերտ)՝ տատիկը, 8%–ը (7աշակերտ)՝ պապիկը: Ունեցանք հետևյալ պատկերը.



ԹԵՍ 2. Ո՞ր հեքիաթն եք լսել առաջին անգամ:

Աշակերտների 51%- ը կամ 6 աշակերտը պատասխանել է <<Կարմիր գլխարկը>>, 25% (3աշակերտ)պատասխանել է <<Գնդլիկ բոքոնիկը >> , 8% (1աշակերտ) պատասխանել է

<<Սպիտակաձյունիկը >>, 8% (1 աշակերտ) պատասխանել է << Պոչատ աղվեսը >>, 8% (1աշակերտ) պատասխանել է << Սուտասանը >>: Ունեցանք հետևյալ պատկերը.



ԹԵՍ 3. Ինչպե՞ս են սկսվում հեքիաթները

75%-ը (9 աշակերտ) պատասխանել է<<Լինում է, չի լինում>>, 17%-ը (2 աշակերտ) պատասխանել է<<Կար-չկար>>, 8%-ը(1 աշակերտ) պատասխանել է <<Ժուկով ժամանակով>>:Այստեղից կարող ենք եզրակացնել,որ երեխաները շատ լավ գիտեն թե ինչպես են սկսվում հեքիաթները,այսինքն ստեղծագործության սկիզբը կարդալով կարող են գլխի ընկնել հեքիաթ է , թե ոչ :



ԹԵՍՏ 4. Ինչպե՞ս են ավարտվում հեքիաթները

Աշակերտների 100% -ը (12 աշակերտ) պատասխանել է երկնքից երեք խնձոր ընկավ: Հատկանշական է այն , որ բոլոր աշակերտները գիտեին, թե ինչպես են ավարտվում հեքիաթները:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարած հետազոտությունների իարդյունքները հնարավորություն են տալիս կատարելու հետևյալ եզրակացությունները.

- Երեխաների համար հեքիաթ ընթերցելիս պետք է հեքիաթի ներքին հույզերն ու զգացմունքայնությունը հասցնել այնպիսի ընթերցանությամբ, որը նրանց մեջ սկզբից ևեթ առաջացնի համապատասխան ապրումներ և հուզական վիճակ:
- Ցանկացած առարկայի ուսուցում, որպեսզի արդյունավետ լինի, պետք է կազմակերպել խաղի, հեքիաթի ձևով՝ սովորեցնել այնպես , ինչպես նա ընկալում է աշխարհը՝ գունագեղ, հստակ ու մատչելի :
- Հեքիաթաստեղծման կարողության ձևավորման համար պետքէ սովորողներին հանձնարարել շատ հեքիաթներ կարդալ: Պետք է կարողանան վերարտադրել կարդացած հեքիաթները իրենց բառերով, տարբեր են հեքիաթի տեսակները, տարբեր են հեքիաթում իրականն ու անիրականը, հասկանան հեքիաթի բարոյախրատական դաստիարակության իմաստը, քննարկեն, վերլուծեն, հայտնեն իրենց կարծիքները հեքիաթի հերոսների վերաբերյալ: Հետևաբար կունենան սեփական կարծիք, մոտեցում, բառապաշար, մտքեր, ինչը կխթանի, որ իրենց հեքիաթը հորինեն :
- Որպեսզի աշակերտների մոտ հեքիաթի գաղափարը ավելի տպավորվի, կարծում եմ ,որ նրանք հաճախ պետք է այցելեն տիկնիկային թատրոն, մասնակցեն հեքիաթների բեմականացրած միջոցառումների, իրենք էլ լինեն մասնակից և խաղան հեքիաթային հերոսների դերեր:

Կարևոր է՝ուսուցիչը դասը հետաքրքիր և արդյունավետ անցկացնի՝ կիրառելով ուսուցման փոխներգործուն մեթոդներ, որոնք աշակերտին կդարձնեն դասի անմիջական մասնակիցը և հնարավորություն կընձեռեն մտածողության և ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

- Հեքիաթը արդյունավետ միջոց է ոչ միայն երեխաների ստեղծագործական կարողությունների զարգացման, այլև մտքի

ճկունության, երևակայության զարգացման գործում: Օրինակ՝ Հ. Թումանյանի « Քաջ Նազարը » , Ղ. Աղայանի

«Անահիտը» հեքիաթները անավարտ են և հնարավորություն են ընձեռում աշակերտներին ազատություն տալ իրենց մտքերին՝ հեքիաթաստեղծման կարողության ձևավորման համար : Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է հպարտ լինի այն գիտակցումով , որ կարող է կրթել ու դաստիարակել ինքնուրույն մտածող, կարդացածին քննադատորեն մոտեցող , բարի, արվեստասեր, սեփականհույզերը, ապրումներն ու մտքերը մայրենի լեզվով գեղեցիկ, անկաշկանդ արտահայտող, գործուն , աշխատասեր անհատներ :

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Դասարան- 3-րդ

Թեման-**Կացին ախպեր**

Դասի տիպը՝ հաղորդման դաս

Նպատակը՝

• Զարգացնել բառապաշարը

• Ամրապնդել լեզվական գիտելիքները

• Զարգացնել կապակցված խոսք կառուցելու, վերլուծություններ կատարելու ,արագ կողմնորոշվելու կարողությունները

Դասի տիպը- Հաղորդման դաս

Դասի կահավորումը - համակարգիչ, ծրարներ կտրատված նկարներով:

Խթանում

Դասը սկսվում է Թումանյանի հեքիաթի դիտմամբ:

Քննարկում ենք հեքիաթի բովանդակությունը, հերոսների արարքները:

*Որտե՞ղ էին իրադարձությունները կատարվում:

*Ինչու՞ զարմացան գյուղի բնակիչները:

*Ինչու՞ գյուղացիները չկարողացան օգտագործել կացին:

Իմաստավորում

Պատասխանները լսելուց հետո երեխաները կարդում են հեքիաթը շարունակելով:Ընթերցանության ընթացքում նշում են ուղղագրական արժեք ունեցող բառերը,որոնք պետք է ընթերցանությունից հետո դուրս գրել:

Ընթերցումից հետո ուղղել հետևյալ հարցերը.

- Նկարագրեք այն գյուղը,որտեղ չգիտեին՝ կացինն ինչ է:
- Ի՞նչը զարմացրեց գյուղացիներին:
- Ինչպիսի՞ն էին գյուղացիները:
- Սարսափահար գյուղացիները ի՞նչ խնդրեցին կացնի տիրոջը:
- Ի՞նչ կլինի հետո:
  - Եթե կացինը լեզու ունենար,ի՞նչ կասեր գյուղացիներին:

Ֆիզկուլտ դադար -:

Կատարել բառային աշխատանք

Բացատրել ***դարման*** բառի իմաստը: Բառատետրերում դուրս գրել մարդիկ, ախպեր, ջարդել, դարսել,խնդրել,առաջին, իջնել,փորձանք, մարագ բառերը:

Դասարանը բաժանվում է երեք խմբի: Յուրաքանչյուր խումբ պետք է ամբողջացնի իրեն տրված ծրարում կտրատված նկարները:Ամբողջացնելուց հետո նկարի մեջտեղի շարքը շրջում են ու կարդում Թումանյանի բանաստեղծություններից:

Հանձնանարեցի դուրս գրել բանաստեղծություններից 5-ական գոյական և բայ: Աշխատանքները ամփոփելուց հետո կրկնում են *գոյականի* և *բայի* մասին ունեցած գիտելիքները:

1.Քարտերի միջոցով կատարել հետևյալ առաջադրանքները.

Նախադասության բայերը օգտագործե՛ք տարբեր օժանդակ բայերի հետ:

*Գործնականորեն ծանոթացնել օժանդակ բայերի ժխտական ձևերին:

2.Տրված օրինակով շարունակե՛ք շարքը:

Կացինը կարմրել էր:

Կացինը չէր կարմրել:

_____

Գյուղացիները վազում էին տիրոջ հետևից:

_____

Կացինը զցում են մարագ:

_____

Ես աշխատում եմ համակարգչով:

_____

Կշռադատում

****Մտածի՛ր:***

Հեքիաթում կացին ախպերը վնասում է այն մարդկանց, ովքեր չգիտեն նրա հետ վարվելու ձևը:

Այսօր նույն կերպ ինչպիե՞ս կարող են վնասել համակարգիչը, հեռուստացույցը, հեռախոսը:

Տնային հանձնարարություն

<u>Կազմել բառակապակցություններ,նախադասություններ բառատետրերում դուրս գրված բառերով:</u>

<u>Դասը սովորել կարդալ,պատմել:</u>

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԳյումիրյանՋ. Հ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա. <<Զանգակ>>հրատ. ,2015:
2. Թումանյան Հովհ.,Երկերի ժողովածու, հ. V, Ե.,1945
3. Ջ.Ռոդարի, Ստեղծագործական երևակայության քերականություն,Երևան,1995:
4. Ղ. ԱղայանՏե՛ս
5. Ջ. Ռոդարի, Ստեղծագործական երևակայության քերականություն, Երևան, 1995, էջ 154
6. http://www.hayary.org/wph/?p=4419